# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Մ. Բաղրամյան պող. 19, 0095, ք. Երևան

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ՊԱՐՈՆ Ռ. Կ. ՌՈՒԲԻՆՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Ռուբինյան,**

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 109-րդ հոդվածը և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածը՝ Ձեզ եմ ներկայացնում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Օրենքի նախագծին կից ներկայացվում են օրենքի ընդունման հիմնավորումը և գործող օրենքի փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքը:

Միաժամանակ հայտնում եմ, որ նշված օրենքի նախագիծը Ազգային ժողովում քննարկելիս որպես օրենսդրական նախաձեռնության հեղինակ և հիմնական զեկուցող հանդես եմ գալու ես՝ Արամ Վարդևանյանս:

Խնդրում եմ նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

***ՀԱՐԳԱՆՔՈՎ՝***
**ԱՐԱՄ ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ**

**03.11.2026թ.**

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 394-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ» բառերը,

2) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:» բառերը փոխարինել «ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:» բառերով:

**Հոդված 2.** Օրենսգրքի 395-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ» բառերը:

**Հոդված 3.** Օրենսգրքի 396-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ» բառերը,

2) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:» բառերը փոխարինել «ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:» բառերով,

3) 2-րդ մասի երրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ» բառերը:

**Հոդված 4.** Օրենսգրքի 400-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ» բառերը,

2) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:» բառերը փոխարինել «ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:» բառերով:

**Հոդված 5.** Օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ» բառերը:

**Հոդված 6.** Օրենսգրքի 402-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ» բառերը:

**Հոդված 7.** Օրենսգրքի 403-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ» բառերը,

2) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:» բառերը փոխարինել «ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:» բառերով:

**Հոդված 8.** Օրենսգրքի 404-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ» բառերը,

2) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:» բառերը փոխարինել «ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:» բառերով:

**Հոդված 9.** Օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ» բառերը:

**Հոդված 10.** Օրենսգրքի 406-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ» բառերը,

2) 1-ին մասի երկրորդ պարբերությունում «ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:» բառերը փոխարինել «ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:» բառերով:

**Հոդված 11.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**(Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու վերաբերյալ)**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

**Հոդված 394. Պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) պատրաստելու նպատակով, պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը**

1. Թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) պատրաստելու նպատակով պրեկուրսոր ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը՝

պատժվում է ~~տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը ~~երկու~~ երեք տարի ժամկետով:

2. Իրացնելու նպատակով պրեկուրսոր ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) շահադիտական դրդումներով,

3) խոշոր չափերով կամ

4) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) առանձնապես խոշոր չափերով կամ

3) անչափահասի ներգրավմամբ կամ անչափահասի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

4. Պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանում է Կառավարությունը:

5. Պրեկուրսորները կամովին հանձնած և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությանը բացահայտելուն աջակցած անձն ազատվում է կամովին հանձնած առարկաների ապօրինի շրջանառության համար սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

***(394-րդ հոդվածը փոփ., լրաց. 11.05.26 ՀՕ-196-Ն)***

**Հոդված 395. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների, ինչպես նաև դրանք**

**պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութերի, սարքավորումների կամ գործիքների օրինական շրջանառության կանոնները խախտելը**

***(վերնագիրը լրաց. 15.06.22 ՀՕ-148-Ն)***

1. Թմրամիջոցի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութի կամ դրանց պատրաստուկի կամ դրանց համարժեք նյութի (անալոգի) կամ դրանց ածանցյալի, ինչպես նաև դրանք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութի, սարքավորման կամ գործիքի օրինական շրջանառության կանոն խախտելն այն անձի կողմից, որի վրա դրված է եղել այդ կանոնի պահպանության պարտականությունը, եթե կանոնը խախտողի անզգուշության հետևանքով տեղի է ունեցել տվյալ նյութի, սարքավորման կամ գործիքի հափշտակություն կամ ապօրինի շրջանառություն՝

պատժվում է ~~տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

***(395-րդ հոդվածը լրաց. 15.06.22 ՀՕ-148-Ն)***

**Հոդված 396. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի**

***(վերնագիրը լրաց. 15.06.22 ՀՕ-148-Ն)***

1. Առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ կամ պրեկուրսոր ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը կամ առաքելը՝

պատժվում է ~~տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ առավելագույնը հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը ~~երկու~~ երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) խոշոր չափերով կամ

2) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝

պատժվում է ~~տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով կամ

2) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված առարկաները կամովին հանձնած և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությանը բացահայտելուն աջակցած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից, եթե նախկինում քրեական

պատասխանատվությունից չի ազատվել նույն կամ սույն օրենսգրքի 393-րդ կամ 394-րդ հոդվածով նախատեսված հիմքով: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

5. Պրեկուրսորների զգալի չափերը սահմանում է Կառավարությունը:

***(396-րդ հոդվածը լրաց. 09.06.22 ՀՕ-240-Ն, 15.06.22 ՀՕ-148-Ն, խմբ. 11.05.26 ՀՕ-196-Ն)***

**Հոդված 400. Թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց պրեկուրսորներ ստանալու իրավունք տվող կեղծ փաստաթուղթ պատրաստելը, օգտագործելը կամ իրացնելը**

1. Թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց արտադրության կամ պատրաստման համար պրեկուրսոր ստանալու իրավունք տվող կեղծ փաստաթուղթ պատրաստելը, օգտագործելը կամ իրացնելը՝

պատժվում է ~~տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը ~~երկու~~ երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) շահադիտական դրդումներով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

**Հոդված 401. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ստանալու իրավունք տվող դեղատոմսեր կամ այլ փաստաթղթեր ապօրինի տրամադրելը**

1. Իրավասու անձի կողմից թմրամիջոց կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ ստանալու իրավունք տվող դեղատոմս կամ այլ փաստաթուղթ ապօրինի տրամադրելը՝

պատժվում է ~~տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է անչափահասի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

***(401-րդ հոդվածը լրաց. 11.05.26 ՀՕ-196-Ն)***

**Հոդված 402. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների գործածմանը հակելը կամ ներգրավելը**

***(վերնագիրը լրաց. 15.06.22 ՀՕ-148-Ն)***

1. Թմրամիջոցի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութի, դրանց պատրաստուկի կամ դրանց համարժեք նյութի (անալոգի) կամ դրանց ածանցյալի գործածմանը հակելը կամ ներգրավելը՝

պատժվում է ~~տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով,

2) շահադիտական դրդումներով,

3) բռնություն գործադրելու սպառնալիքով,

4) խաբեությամբ կամ վստահությունը չարաշահելով կամ

5) հանցագործությունից տուժած անձի նկատմամբ ունեցած իշխանությունը, հեղինակությունը, հանցագործությունից տուժած անձի վիճակի խոցելիությունը, անօգնական վիճակը կամ նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է բռնություն գործադրելով,

2) անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ կամ նրա առողջությանը ծանր վնասի պատճառում կամ

3) կատարվել է անչափահասի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը հանցավոր կազմակերպության կողմից կատարելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով:

***(402-րդ հոդվածը լրաց. 15.06.22 ՀՕ-148-Ն, փոփ., լրաց. 11.05.26 ՀՕ-196-Ն)***

**Հոդված 403. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների գործածմանը նպաստելը**

***(վերնագիրը լրաց. 15.06.22 ՀՕ-148-Ն)***

1. Թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ գործածելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ հանրային հաստատությունը նույն նպատակով օգտագործելը կամ թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ գործածելու համար բնակարան, շինություն, ավտոմեքենա կամ այլ կացարան տրամադրելը՝

պատժվում է ~~տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը ~~երկու~~ երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով,

3) ձերբակալված կամ կալանավորված անձանց պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում,

4) զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում կամ

5) ուսումնական հաստատությունում կամ դրա հարակից տարածքում՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

***(403-րդ հոդվածը լրաց. 15.06.22 ՀՕ-148-Ն)***

**Հոդված 404. Շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ցանելը կամ աճեցնելը**

1. Շրջանառությունն արգելված թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութ պարունակող բույս ցանելը կամ աճեցնելը խոշոր չափերով՝

պատժվում է ~~տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը ~~երկու~~ երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

2) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անչափահասի ներգրավմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

4. Շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանում է Կառավարությունը:

***(404-րդ հոդվածը խմբ. 11.05.26 ՀՕ-196-Ն)***

**Հոդված 405. Խիստ ներգործող կամ թունավոր նյութերի ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը**

1. Իրացնելու նպատակով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ կամ դրանց պատրաստուկ չհամարվող խիստ ներգործող կամ թունավոր նյութ ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը, տարածելը, գովազդելը կամ դրանք ապօրինի իրացնելը՝

պատժվում է ~~տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) ձերբակալվածի կամ կալանավորվածի անձանց պահելու վայրում կամ քրեակատարողական հիմնարկում,

4) զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում,

5) ուսումնական հաստատությունում կամ դրա հարակից տարածքում կամ

6) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից կամ

2) անչափահասի ներգրավմամբ կամ անչափահասի նկատմամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

4. Խիստ ներգործող նյութերի ցանկը, ինչպես նաև դրանց խոշոր չափերը սահմանում է Կառավարությունը:

5. Թունավոր նյութերի ցանկը սահմանում է Կառավարությունը:

6. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նյութերը կամովին հանձնած և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործության բացահայտմանն ակտիվորեն աջակցած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված հանցանքի համար քրեական պատասխանատվությունից: Եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա անձը ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար:

***(405-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 11.05.26 ՀՕ-196-Ն)***

**Հոդված 406. Թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ չհամարվող խիստ ներգործող կամ թունավոր նյութերի, ինչպես նաև դրանք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութերի, սարքավորումների կամ գործիքների օրինական շրջանառության կանոնները խախտելը**

1. Թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ չհամարվող խիստ ներգործող կամ թունավոր նյութի, ինչպես նաև դա պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութի, սարքավորման կամ գործիքի օրինական շրջանառության կանոն խախտելն այն անձի կողմից, որի վրա դրված է եղել այդ կանոնի պահպանության պարտականությունը, եթե կանոնը խախտողի անզգուշության հետևանքով տեղի է ունեցել տվյալ նյութի, սարքավորման կամ գործիքի հափշտակություն կամ ապօրինի շրջանառություն՝

պատժվում է ~~տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ~~ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ

ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ առավելագույնը՝ ~~երկու~~ երեք տարի ժամկետով:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**1. Կարգավորման ենթակա ոլորտի կամ խնդրի սահմանումը.**

Նախագծով կարգավորման ենթակա ոլորտն առնչվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 40-րդ գլխով ամրագրված թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների համար սահմանված պատժատեսակներին և պատժաչափերին:

Նախագծի նպատակն է վերանայել նշված գլխով նախատեսված առանձին հանցակազմերի համար սահմանված պատժաչափերը՝ խստացնելով այն հոդվածների սանկցիաները, որոնցով որպես պատժատեսակ նախատեսված են տուգանքը կամ մինչև երկու տարի ժամկետով ազատազրկումը: Առաջարկվող փոփոխությունների նպատակն է նշված արարքների հանրային վտանգավորության պատշաճ արտացոլումը քրեաիրավական կարգավորումներում, քրեական պատասխանատվության համաչափ և արդյունավետ համակարգի ապահովումը և պատժի կանխարգելիչ նշանակության ամրապնդումը:

**2. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

*2. Ոչ մեծ ծանրության հանցանքներ են համարվում սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 2 տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ:*

Միևնույն ժամանակ, Օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

*3. Միջին ծանրության հանցանքներ են համարվում սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 5 տարի ժամկետով ազատազրկումը:*

Հետևաբար, հանցանքի ծանրության աստիճանը որոշելիս էական նշանակություն ունեն ոչ միայն արարքի բնույթն ու հանրային վտանգավորությունը, այլև համապատասխան հանցակազմի սանկցիայի օրենսդրական կառուցվածքը:

Օրենսգրքի 40-րդ գլխով նախատեսված արարքները վերաբերում են հանրային առողջության և անվտանգության համար նշանակալի ռիսկեր առաջացնող նյութերի օրինական շրջանառության խախտումներին: Դրանց մի մասը կարող է նպաստել թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության շղթայի ձևավորմանը, նյութերի ապօրինի արտադրությանը կամ տարածմանը, դրանց օգտագործման համար պայմանների ստեղծմանը, ինչպես նաև հատուկ հսկողության ենթակա նյութերի, սարքավորումների կամ գործիքների՝ ապօրինի շրջանառության մեջ հայտնվելուն: Նման արարքների կանխարգելումը պահանջում է հանցակազմերի առանձնահատկություններին և կոնկրետ արարքի հանրային վտանգավորությանը համապատասխան քրեաիրավական արձագանք:

Միաժամանակ, պատժի խստացման անհրաժեշտությունը պետք է հիմնավորվի ոչ միայն հանցագործությունների ընդհանուր թվով, այլև տվյալ հանցակազմերի բնույթով, դրանց հնարավոր վնասակար հետևանքներով, գործող սանկցիաների բավարարությամբ և առաջարկվող փոփոխությունների համաչափությամբ: Նախագծի նպատակը չպետք է մեկնաբանվի որպես բոլոր հանցակազմերի նկատմամբ նույն պատժի մեխանիկորեն կիրառման պահանջ. պատժաչափը պետք է շարունակի հաշվի առնել արարքի ծանրությունը և հանցակազմերի միջև առկա տարբերությունները:

Չնայած այն հանգամանքին, որ Օրենսգիրքը խստորեն սահմանել է թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունները և դրանց համար նախատեսել է խիստ պատժաչափեր,

այնուամենայնիվ, ներկայումս առկա օրենսդրական կարգավորումներում դեռևս առկա են այնպիսի հանցակազմեր, որոնց համար նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, որի արդյունքում էլ այդ հանցակազմերը Օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով համարվում են ոչ մեծ ծանրության:

ՄԱԿ-ի՝ 1988 թվականի «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետը պետություններին պարտավորեցնում է ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և վարչական միջոցներ՝ կոնվենցիայի նպատակներն իրականացնելու համար, իսկ 3-րդ հոդվածը նախատեսում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության մի շարք ձևերի քրեականացմանն ու ծանրացնող հանգամանքների հաշվառմանն ուղղված դրույթներ:

Նույն հոդվածի 6-րդ կետը սահմանում է՝

*6. Կողմերը ձգտում են ապահովել սույն հոդվածով սահմանված օրինախախտումների կատարման համար դատական կարգով անձանց հետապնդմանն առնչվող ցանկացած* ***ինքնահայաց իրավական լիազորությունների կիրառումը***՝ *իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան՝* ***այդ օրինախախտումների նկատմամբ օրինապահ միջոցները առավել արդյունավետ դարձնելու նպատակով*** *և հաշվի առնելով նման օրինախախտումների կատարմանը խոչընդոտելու անհրաժեշտությունը:*

Բացի այդ, «Թմրամիջոցների մասին» 1961 թվականի միասնական կոնվենցիայի 36-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսվում է՝

*ա/ Պահպանելով իր սահմանադրական սահմանափակումները, յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է միջոցներ, որոնք կապահովեն, որ Կոնվենցիայի դրույթներին հակառակ թմրամիջոցների մշակումը, արտադրությունը, պատրաստումը, առանձնացումը, պահպանումը, առաջարկը, առևտրային նպատակներով առաջարկը, տարածումը, գնումը, վաճառքը, ցանկացած պայմաններով առաքումը, միջնորդությունը, ուղարկումը, ուղարկումը տարանցիկ երթուղով, ներմուծումն ու արտահանումը և որևէ այլ գործողություն, որը, Կողմերի կարծիքով, կարող է սույն Կոնվենցիայի դրույթների խախտում հանդիսանալ,*

*սահմանվեն որպես պատժելի արարքներ, եթե դրանք կատարվել են **կանխամտածված**, և ապահովում է, որ լուրջ օրինախախտումները ենթակա լինեն համապատասխան պատիժների կիրառման, **մասնավորապես՝ բանտարկության կամ ազատազրկման այլ միջոցի:***

«Հոգեներգործուն նյութերի մասին» 1971 թվականի կոնվենցիայի 22-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝

*1. ա/ Պահպանելով իր սահմանադրական սահմանափակումները, յուրաքանչյուր Կողմ որպես պատժելի օրինախախտում է դիտարկում, այն դեպքերում, երբ օրինախախտումը կանխամտածված է, ցանկացած արարք, որը հակասում է սույն Կոնվենցիայով սահմանված պահանջների կատարմանն ուղղված որևէ օրենքի կամ ենթաօրենսդրական ակտի, և ապահովում է, որ լուրջ օրինախախտումները ենթակա լինեն համապատասխան պատիժների կիրառման, մասնավորապես՝ բանտարկության կամ ազատազրկման այլ միջոցի:*

Նույն կոնվենցիայի 23-րդ հոդվածի համաձայն՝

*Կողմը կարող է կիրառել սույն Կոնվենցիայով նախատեսվածներից ավելի խիստ միջոցներ, եթե, իր կարծիքով, այդպիսի միջոցների կիրառումը նպատակահարմար է կամ անհրաժեշտ է **բնակչության առողջության և բարեկեցության պահպանման համար:***

Ստացվում է, որ «Հոգեներգործուն նյութերի մասին» կոնվենցիան պատժաչափ և պատժատեսակ սահմանելիս առանձնահատուկ շեշտադրում է կատարում բնակչության առողջության և բարեկեցության պահպանմանը՝ պետությանն ընձեռելով հնարավորություն սահմանելու, ի թիվս այլնի, խիստ պատժաչափեր, եթե այդպիսի միջոցների կիրառումը նպատակահարմար է:

Նման կարգավորում նախատեսում է նաև «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» կոնվենցիան՝ պետության գործող իրավիճակից ելնելով ինքնահայաց իրավական լիազորությունների կիրառման հնարավորություն սահմանելով՝ օրինախախտումների նկատմամբ օրինապահ միջոցները առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Վերոշարադրյալում ներկայացված կոնվենցիաները սահմանում են ընդհանուր դրույթներ թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի դեմ պայքարի համար և, անդրադառնալով պատժատեսակներին ու պատժաչափերին՝ մասնավորապես նշում են, որ դրանց ճշգրիտ սահմանումը պայմանավորված է պետության՝ թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի հետ կապված հանցագործությունների վիճակագրությամբ, և պետությանը տալիս են թմրամիջոցների դեմ պայքարի առավել ինտենսիվ միջոցների ձեռնարկման գործիքներ կիրառելու հնարավորություն:

**Միջազգային և համեմատական իրավական փորձի վերլուծությունը ևս հիմնավորում է թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և պրեկուրսորների ապօրինի շրջանառությանն առնչվող հանցակազմերի նկատմամբ առավել խիստ քրեական քաղաքականության վարման և դրանք ոչ մեծ ծանրության հանցանքների շարքից միջին ծանրության հանցագործությունների դասին տեղափոխելու անհրաժեշտությունը:** Մասնավորապես, Եվրոպական միության խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 25-ի «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում հանցակազմերի տարրերի և պատիժների վերաբերյալ նվազագույն դրույթներ սահմանելու մասին» թիվ 2004/757/JHA շրջանակային որոշման (Council Framework Decision 2004/757/JHA) 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անդամ պետությունները պարտավոր են երաշխավորել, որ թմրամիջոցների և պրեկուրսորների ապօրինի շրջանառության հիմնական հանցակազմերը **պատժվեն արդյունավետ, համաչափ և զսպող (կանխարգելիչ) քրեական պատիժներով** (effective, proportionate and dissuasive criminal penalties), ընդ որում՝ հիմնական հանցակազմերի համար նախատեսելով առավելագույն պատիժ՝ առնվազն 1-ից մինչև 3 տարի ժամկետով ազատազրկման սահմաններում, իսկ ծանրացնող հանգամանքների առկայության դեպքում՝ առնվազն 5-ից 10 տարի ժամկետով ազատազրկում: Այս մոտեցումը վկայում է, որ եվրոպական իրավական տարածքում նույնիսկ հիմնական (առանց ծանրացնող հանգամանքների) հանցակազմերի համար որպես կանոն ամրագրվում է մինչև 3 տարի և ավելի ազատազրկման վերին շեմ, ինչը ՀՀ քրեական

օրենսգրքի դասակարգմամբ համապատասխանում է միջին ծանրության հանցագործություններին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) իր կայուն նախադեպային իրավունքում բազմիցս ընդգծել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության բացառիկ հանրային վտանգավորությունը և պետությունների լայն հայեցողության շրջանակը (margin of appreciation)՝ այս ոլորտում կոշտ և անզիջում քրեական քաղաքականություն վարելու հարցում: Մասնավորապես, *«Էյր Կանադան ընդդեմ Միացյալ Թագավորության» (AirCanada v. the United Kingdom, 1995 թ.), «Բոսֆորուս Հավա Յոլլարը Թուրիզմ վե Թիջարեթ Ա.Շ.-ն ընդդեմ Իռլանդիայի» (2005 թ.), ինչպես նաև «Իլյասովն ընդդեմ Ռուսաստանի» (Ilyasov v. Russia)* և մի շարք այլ գործերով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ թմրամիջոցների տարածումը հանրային առողջության և հասարակական անվտանգության դեմ ուղղված ծանրագույն սպառնալիք է («scourge»), որի դեմ պայքարը պահանջում է պետական մարմինների կողմից մեծագույն վճռականություն և խիստ քրեաիրավական միջոցների կիրառում: Ընդ որում, «Կյանքի իրավունքի» (ՄԻԵԿ 2-րդ հոդված) և «Անձնական կյանքի հարգման իրավունքի» (ՄԻԵԿ 8-րդ հոդված) համատեքստում պետությունը կրում է պոզիտիվ պարտավորություն՝ ստեղծելու այնպիսի արդյունավետ և զսպող քրեաիրավական կառուցակարգեր, որոնք ի զորու կլինեն իրապես կանխարգելել բնակչության, հատկապես՝ խոցելի խմբերի և երիտասարդության ներգրավումը թմրամիջոցների շրջանառության մեջ:

Վերոգրյալ միջազգային մոտեցումները հիմք են տալիս եզրակացնելու, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները չեն կարող դիտարկվել որպես հանրային վտանգավորության ցածր աստիճան ունեցող արարքներ և, հետևաբար, դասվել ոչ մեծ ծանրության հանցանքների շարքին: Մասնավորապես, հաշվի առնելով այդ հանցագործությունների՝ հանրային առողջության և հասարակական անվտանգության համար առաջացրած լուրջ սպառնալիքները, ինչպես նաև դրանց կանխարգելման ուղղությամբ պետության ստանձնած պոզիտիվ պարտավորությունները՝ դրանց նկատմամբ անհրաժեշտ է որդեգրել հանրային վտանգավորությանը համարժեք խիստ քրեական քաղաքականություն: Հետևաբար, խնդրո

առարկա հանցագործությունները ոչ մեծ ծանրության հանցանքների շարքին դասելը չի արտացոլում դրանց իրական վտանգավորությունը և չի բխում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ արդյունավետ պայքար ապահովելու՝ պետության պարտավորությունից:

Հատկանշական է, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում մի շարք պետություններ որդեգրել են առավել խիստ քրեական քաղաքականություն՝ խնդրո առարկա արարքների հանրային վտանգավորությանը համահունչ սահմանելով ազատազրկման առավել խիստ պատժաչափեր: Մասնավորապես, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության գործող իրավակարգավորումների, որոշ պետությունների օրենսդրությամբ թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն առնչվող մի շարք հանցագործությունների համար նախատեսված պատժաչափերն ինքնին բացառում են այդ արարքները նվազ ծանրության հանցագործությունների շարքին դասելու հնարավորությունը:

Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրքի (Code pénal) 222-37-րդ հոդվածի և Հանրային առողջության օրենսգրքի (Code de la santé publique) L3421-1–L3421-4 հոդվածների համաձայն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառությանն օժանդակող արարքները, կեղծ դեղատոմսերի միջոցով թմրամիջոցներ ստանալը կամ դրանց գործածումը դյուրացնելը պատժվում են 5-ից մինչև 10 տարի ժամկետով ազատազրկմամբ.

Վրաստանի քրեական օրենսգրքի 260–266-րդ հոդվածներով նախատեսված՝ թմրամիջոցների, դրանց անալոգների կամ պրեկուրսորների ապօրինի շրջանառության, թմրամիջոց պարունակող բույսերի ապօրինի ցանքի կամ աճեցման, ինչպես նաև թմրամիջոցների գործածման համար հաստատություն (որջ) ստեղծելու կամ պահելու հիմնական հանցակազմերի համար ևս սահմանված են 3-ից մինչև 6 տարի ժամկետով ազատազրկման պատժաչափեր՝ բացառելով դրանց դասումը ոչ մեծ ծանրության հանցանքների շարքին:

Անդրադարձ կատարելով Հայաստանի Հանրապետությունում առկա վիճակագրությանը՝ ցանկանում ենք ներքոշարադրյալում անդրադառնալ ՀՀ գլխավոր

դատախազության և ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից հրապարակված պաշտոնական տվյալներին:

ՀՀ դատախազության 2025 թվականի տարեկան հաղորդման համաձայն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունները **2024 թվականի 3017 դեպքից 2025 թվականին հասել են 3631 դեպքի, այսինքն՝ աճել են 614 դեպքով կամ 20,4%-ով:**

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցավորությունը վերջին տարիներին դրսևորել է էական աճի միտում, ընդ որում՝ 2024 թվականի որոշակի նվազումը չի կարող ինքնին վկայել խնդրի էական թուլացման մասին, քանի որ այն մասնավորապես պայմանավորված է քրեական և վարչական պատասխանատվության սահմանազատման փոփոխություններով: 2025 թվականին արձանագրվել է նոր աճ՝ 20,4 տոկոսով:

Դատախազությունն արձանագրել է, որ հաշվետու ժամանակահատվածում թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների թիվը կազմել է **4170՝ 2024 թվականին արձանագրված 3485 դեպքի դիմաց (աճը կազմել է 685 դեպք կամ 19,7%):**

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի թիվը կազմել է **3631՝ 2024 թվականի 3017-ի դիմաց (աճը կազմել է 614 դեպք կամ 20,4%):** Ընդ որում, իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը կազմել են **2176, որը 2024 թվականին արձանագրված 1933 դեպքի համեմատ աճել է 243-ով կամ 12,6%-ով:**

**2025 թվականի ընթացքում թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների բացահայտման ցուցանիշը կազմել է 26,3%՝ 2024 թվականի 13,8%-ի դիմաց:** Ընդ որում, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է **25,4%՝** 2024 թվականի **13,4%-ի** դիմաց, իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է **13,2%՝** 2024 թվականի **8,2%-ի** դիմաց, թմրամիջոցների մաքսանենգության դեպքերի բացահայտման ցուցանիշը կազմել է **21,8%՝** 2024 թվականի **10,9%-ի** դիմաց:

2024 թվականի համեմատ՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության բացահայտման ցուցանիշն աճել է **5%-ով, իսկ Երևան քաղաքում՝ 2,7%-ով:**

2025 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում ապօրինի շրջանառությունից առգրավվել են **768 կգ 886,6 գրամ տարբեր տեսակի թմրամիջոցներ,** նախորդ տարվա **426 կգ 563 գրամի** դիմաց: Առգրավվել են նաև՝ **235,6 գրամ հոգեմետ նյութեր,** նախորդ տարվա **750,17 գրամի** դիմաց:

2025 թվականի ընթացքում առգրավվել են **434,42 գրամ պրեկուրսորներ,** նախորդ տարվա **29,8 գրամի** դիմաց:

Հաշվետու ժամանակահատվածում առգրավված թմրամիջոցների գերակշիռ մասը՝ **554 կգ 988,94 գրամը, բնական ծագման թմրամիջոցներ են** (2024 թվականին՝ 388 կգ 16 գրամ), իսկ **213 կգ 897,66 գրամը՝ սինթետիկ ծագման թմրամիջոցներ** (2024 թվականին՝ 38 կգ 547 գրամ):

Նախորդ տարվա (2024 թ.) համեմատությամբ արձանագրվել է ինչպես բնական, այնպես էլ սինթետիկ ծագման առգրավված թմրամիջոցների ծավալների աճ:

Առգրավված բնական ծագման թմրամիջոցների աճը կազմել է **շուրջ 166 կգ 972,94 գրամ (մոտ 43% աճ):** Սինթետիկ թմրամիջոցների դեպքում աճը կազմել է **շուրջ 175 կգ 350,66 գրամ (աճն ավելի քան 5 անգամ է):**

Այս հանգամանքները վկայում են ոչ միայն ապօրինի շրջանառության ծավալների մեծացման, այլև այս հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացման մասին:

Վերոնշյալ տվյալները վկայում են, որ 2025 թվականին թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված գրանցված հանցագործությունների ընդհանուր թիվը զգալիորեն աճել է նախորդ տարվա համեմատ: Այդ ցուցանիշը հիմնավորում է խնդրի շարունակական ուսումնասիրության և կանխարգելման միջոցառումների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը:

«Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ից ստացված տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ «թմրամոլություն» ախտորոշմամբ հաշվառվել է **7650 անձ**, 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ **7772 անձ**, 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ **7570 անձ**, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ **7392 անձ**, 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ **7209 անձ**, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ **6951 անձ**, 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ **6572 անձ**:

Ութ տարվա ընթացքում յուրաքանչյուր տարում արձանագրված պարբերական աճը ևս վկայում է թմրամիջոցների արատավոր երևույթի շարունակական բնույթի և կանխարգելման գործիքակազմերի անհրաժեշտության մասին:

Վերոշարադրյալում նկարագրված պաշտոնական վիճակագրական տվյալները վկայում են թմրամիջոցների վերաբերյալ հանցագործությունների պարբերական աճի մասին: Ընդհանուր առմամբ, թմրամիջոցների արատավոր երևույթը գնալով ավելի է ուժգնանում Հայաստանի Հանրապետությունում:

Առավել քան ողջամիտ չէ, որ բնակչության առողջության դեմ ուղղված այնպիսի հանցագործությունները, ինչպիսիք են պրեկուրսորների ապօրինի շրջանառությունը թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) պատրաստելու նպատակով, պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանք ապօրինի իրացնելը (հոդված 394), առանց իրացնելու նպատակի զգալի չափերով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ կամ պրեկուրսոր ապօրինի արտադրելը, պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը կամ առաքելը (հոդված 396), թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց արտադրության կամ պատրաստման համար պրեկուրսոր ստանալու իրավունք տվող կեղծ փաստաթուղթ պատրաստելը, օգտագործելը կամ իրացնելը (հոդված 400), թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ

դրանց ածանցյալ գործածելու համար հաստատություն ստեղծելը, ղեկավարելը կամ պահելը կամ հանրային հաստատությունը նույն նպատակով օգտագործելը կամ թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ գործածելու համար բնակարան, շինություն, ավտոմեքենա կամ այլ կացարան տրամադրելը (հոդված 403), շրջանառությունն արգելված թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութ պարունակող բույս ցանելը կամ աճեցնելը խոշոր չափերով (հոդված 404) և թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ չհամարվող խիստ ներգործող կամ թունավոր նյութի, ինչպես նաև դա պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութի, սարքավորման կամ գործիքի օրինական շրջանառության կանոն խախտելն այն անձի կողմից, որի վրա դրված է եղել այդ կանոնի պահպանության պարտականությունը, եթե կանոնը խախտողի անզգուշության հետևանքով տեղի է ունեցել տվյալ նյութի, սարքավորման կամ գործիքի հափշտակություն կամ ապօրինի շրջանառություն (հոդված 406), **ունենան ՀՀ քրեական օրենսգրքի իմաստով ոչ մեծ ծանրության հանցանքի կարգավիճակ:**

**Քրեաիրավական, քրեադատավարական և օպերատիվ-հետախուզական ասպեկտներով հանցակազմերը «ոչ մեծ ծանրության» կարգավիճակից «միջին ծանրության» հանցագործությունների շարքին տեղափոխելու իրավական հիմնավորվածությունը.**

ՀՀ քրեական օրենսգրքի համակարգում հանցագործության դասակարգումը որպես «ոչ մեծ ծանրության» (հոդված 17, մաս 2) կամ «միջին ծանրության» (հոդված 17, մաս 3) ունի ոչ միայն քրեական քաղաքականության մշակման ուղղություն, այլև նյութաիրավական և դատավարական նշանակություն: Գործող կարգավորման պայմաններում, երբ Օրենսգրքի 394-րդ, 396-րդ, 400-րդ, 403-րդ, 404-րդ և 406-րդ հոդվածների համապատասխան մասերը համարվում են ոչ մեծ ծանրության հանցանքներ, առաջանում են հետևյալ համակարգային խնդիրները, որոնք լուծվում են սույն Նախագծով՝

**1) Քրեաիրավական ներգործության, հանցանքների կանխարգելման և համաչափ պատասխանատվության արդյունավետության բարձրացում.**

**2) Տուգանքի՝ որպես հիմնական պատժատեսակի բացառումը որպես նման հանրային վտանգավորության աստիճան ունեցող արարքների** նկատմամբ պատժի անհամաչափ մեղմ կամ անհամաչափ լինելու հանրային ընկալման և դրա նկատմամբ պետության համարժեք քրեաիրավական քաղաքականության ապահովում:

Հաշվի առնելով թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության՝ հանրային առողջության և անվտանգության համար առաջացրած ռիսկերը, ինչպես նաև 2025 թվականի ընթացքում այդ ոլորտում գրանցված հանցագործությունների ընդհանուր թվի աճը՝ հիմնավոր է վերանայել այն հանցակազմերի սանկցիաները, որոնց գործող կառուցվածքը թույլ է տալիս նշանակել միայն տուգանք կամ նախատեսում է առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկում: Առաջարկվող մոտեցումը նպատակ ունի ապահովել, որ տվյալ արարքների համար նախատեսված պատժային միջոցներն արտացոլեն դրանց հանրային վտանգավորությունը և բավարար հնարավորություն տան դատարանին՝ կոնկրետ գործի հանգամանքներին համաչափ պատիժ նշանակելու համար:

Տուգանքը՝ որպես հիմնական պատժատեսակ, բացառելու առաջարկը պետք է դիտարկել որպես պատժային քաղաքականության նպատակային վերանայում, այլ ոչ թե ինքնին ապացույց, որ տուգանքը բոլոր դեպքերում անարդյունավետ է: Այդ ընտրությունը հիմնավորվում է այն դիրքորոշմամբ, որ նախագծով ընդգրկված արարքների բնույթի և դրանց հնարավոր հետևանքների պայմաններում անհրաժեշտ է սահմանել ավելի խիստ պատժային շրջանակ: Միաժամանակ, պատժի անհատականացման, համաչափության և մեղավորության սկզբունքները պետք է պահպանվեն:

Առանձնահատուկ նշանակություն ունի նաև անչափահասների և երիտասարդների պաշտպանությունը, քանի որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունը և դրանց գործածման համար պայմանների ստեղծումը կարող են վտանգել նրանց առողջությունը, բնականոն զարգացումը և անվտանգությունը:

Գնահատելով առկա իրավիճակը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունումը կնպաստի թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 40-րդ գլխով նախատեսված հանցագործությունների համար սահմանված քրեաիրավական կարգավորումների և պատասխանատվության միջոցների համաչափեցմանը՝ դրանք համապատասխանեցնելով այլ հանցագործությունների համար նախատեսված կարգավորումներին:

**3. Առկա խնդիրներին առաջարկվող լուծումները, կարգավորման նպատակը, ակնկալվող արդյունքները.**

Առկա խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է Օրենսգրքի 394–396-րդ և 400–406-րդ հոդվածներում կատարել նախագծով նախատեսված փոփոխությունները՝ համապատասխան սանկցիաներից հանելով տուգանքը՝ որպես պատժատեսակ, իսկ 394-րդ, 396-րդ, 400-րդ, 403-րդ, 404-րդ և 406-րդ հոդվածների համապատասխան մասերով ազատազրկման առավելագույն ժամկետը երկու տարուց երեք տարի դարձնելով՝ դրանով իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով նշված բոլոր հանցակազմերը դասելով միջին ծանրության հանցագործությունների շարքին:

Կարգավորման հիմնական նպատակներն են՝

- թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների և պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացումը՝ համապատասխան հանցակազմերի համար պատժային շրջանակը վերանայելու միջոցով.
- նշված արարքների հանրային վտանգավորության և դրանց համար նախատեսվող պատժի միջև առավել հիմնավորված համապատասխանության ապահովումը.
- բնակչության առողջության և անվտանգության պաշտպանությունը, այդ թվում՝ անչափահասների ու երիտասարդների՝ թմրամիջոցների գործածման և ապօրինի շրջանառության վնասակար հետևանքներից պաշտպանվածության ամրապնդումը.

- պատժի կանխարգելիչ նշանակության ուժեղացումը՝ միաժամանակ պահպանելով համաչափության և պատժի անհատականացման պահանջները.
- ՀՀ քրեական օրենսգրքի 40-րդ գլխով նախատեսված համապատասխան հանցակազմերի տեղափոխումը ոչ մեծ ծանրության հանցանքների շարքից միջին ծանրության հանցագործությունների դասին՝ ապահովելով ներճյուղային համաչափությունը և քրեական քաղաքականության համարժեք ու համաչափ մոտեցումը:

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է վերանայել նշված հանցակազմերի համար նախատեսված պատժային հնարավորությունները, բացառել տուգանքի կիրառումը նախագծով ընդգրկված համապատասխան սանկցիաներով և բարձրացնել որոշ հանցակազմերի համար սահմանված ազատազրկման առավելագույն ժամկետը: Ակնկալվում է, որ փոփոխությունները կնպաստեն թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության դեմ իրականացվող կանխարգելիչ ու իրավապահ միջոցառումների ընդհանուր համակարգին:

**4. Իրավական ակտի նախագիծը մշակող պատասխանատու մարմինը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնողի, հեղինակների և մշակմանը մասնակցող անձանց մասին տեղեկություններ.**

Նախագիծը մշակվել է Ազգային ժողովի պատգամավոր Արամ Վարդևանյանի կողմից:

**5. Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտության մասին.**

Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չկա: